

ւանօրէն Գնունի տակառապետին եւ գործակցաց պաշտօնը մինչեւ սեղանն ալ կը հասնէր. զի միջին դարուն մատուցականերն իսկ կը լեցնեն ու կը պատրաստեն զինւոյ թակոյկները (Նար. 342). եւ Փարաւոնի եւ Աղեքսանդրի տակառապետները միանգամայն մատուցակ են (Ծննդ. Խ, 11. Պտմ. Աղ. 172-2): — Պաշտօնեայս՝ Մնացորդաց առաջին թարգմանչէն կը կոչուի նաեւ բերանապարիշտ (Բ, Թ, 4), այս ինքն բերանի ծառայող, ուր երկրորդ թարգմանութիւնը մատուցակ կ'ըսէ ուրիշ մատենագրաց հետ (Պտմ. Աղ. 100, եւն):

Մեր աշխարհի անշքագոյն շրջանին անգամ, ինչպէս էր Տաթեւացւոյն դարը, տակաւին «բազում աշխատողք զոն կերակրոցն եւ ըմպելեացն, յայնմ օրէ՛ որք սերմանեն եւ հնձեն եւ եփեն եւ պատրաստեն ի սեղանն» (Քրդ. ամբ. 348). եւ ասոնց մէջ յանուանէ կը յիշուի դեռ հին «մատուցակն յոտն կացեալ» (անդ, 349): Գրիգոր վարդապետին ալ՝ որ միջնադարեան գրիչ մ'է, ծանօթ են տակաւին «յոտն կացութիւն ծառայիցն եւ սպասաւորութիւն սպասաւորացն՝ մեծատանց ճաշարանաց մէջ (Ողբ):

Եթէ խնճոյից սպասաւորք այրեր են՝ գործոյն ծանրութեան եւ կոչնականաց սե-